

4b

4047

281.6

2-95

1908

21259

46

281-6

Շ-95

✓ 42

Շրջաներական

Նահանգապետաց յայտկոյո կովկասեան կողմանց եւ վիճակաւոր Առաջնորդաց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ, ըրբ ինոյն կողմանա:

ԿԱՆՈՆՔ

ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱԶԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱՅ

Կարգադրութեամբ վասն կառավարութեան հոգևորական գործոց քրիստոնէից Լուսաւորչական Հայոց դաւանութեան (հատոր XI մասն 1 զլուխ 2 յօդուածք 917 եւ 919) սահմանեալ է, զի յրնտրութիւն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց մասնակցին ամենայն լանդամբ Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին էջմիածնի եւ եօթն երիցագոյն եպիսկոպոսունք, որք յայնժամ գտանիցին յէջմիածին (ի զիպուածս պահաութեան եպիսկոպոսաց, զայն թիւ լինուն երիցագոյն վարդապետք տեղւոյն). Վիճակաւոր առաջնորդք կամ այնորիկ, զորս նշանակեն նորա ի հոգևորականաց, եւ բայ յայսմանէ աշխարհա-

281-6
Շ-95

26760-62

2001

2010

կան պատգամաւորք, ընտրեալք մի մի յիւրաքանչիւր թեմից:

Վասն ընտրութեան աշխարհական պատգամաւորաց ի նոյն իսկ կարգադրութեան (յօդ. 917) սահմանեալ է, զի նոքա ընտրին յամենայն մելիքաց, յիւզբաշիաց և յայլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ, որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմի ծիսի այսր եկեղեցւոյ:

Ունելով ի նկատ զառաջիկայ ընտրութիւն Ծայրագոյն Պատրիարքին Էջմիածնի և ցանկաւով տալ Կովկասեան յայսկոյս սահմանի Հայոց ժողովրդեան ըստ ամենայնի կանոնաւոր և համաձայն օրինաց միջոցս ընտրութեան աշխարհական պատգամաւորաց, որք ունին զիրաւունս մասնակցել յայսմ վսեմ գործ և առ ի զառաջս առնուլ այնոցիկ զանցառութեանց ի կարգէ, որք եղեն ի նախկին ընտրութիւնս, ես հարկաւոր համարիմ սահմանել ի ձեռնարկութիւն զհետեւեալ կանոնս:

1) Իւրաքանչիւր վիճակաւոր Լուսաւորչական Հայոց թեմի յայսկոյս Կովկասեան սահմանի յընդունիլ իւրում ի Սինօդէն Էջմիածնի զհրաման յաղագս յառաջիկայ ընտրութեան Պատրիարքին ամենայն Հայոց, ծանուցանէ զայնմանէ նահանգապետին իւրում թեմի վասն առնելոյ զարժանին տնօրէնութիւն ի մասին ընտրութեան ի նոյն վիճակէ միոյ աշխարհական

պատգամաւորի, որ պարտի մասնակից լինել յընտրութիւն Պատրիարքին ամենայն Հայոց:

2) Վիճակաւոր Առաջնորդն ի ծանուցագրի իւրում, հիմնեալ ի վերայ բաժանման վիճակին, որ նշանակեալ է ի կարգադրութեան յաղագս կառավարութեան Հոգեւոր գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ (հատոր XI մասն 1 զլուի 4 յօդ. 962, 963, 964 և 965) պարտի ցուցանել զայնոսիկ գաւառս և գաւառակս (ուեղղ և ուչաստօկ), յորս սահմանեալ են Հոգեւոր կառավարութիւնք և Գործակալութիւնք և յորս անդամք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ըստ վաղեմի ծիսի այսր եկեղեցւոյ ունին իրաւունս մասնակից լինել յընտրութիւն աշխարհական պատգամաւորի, պարտաւոր են ընտրել ի միջոյ իւրեանց զերեսփոխանս:

3) Ի ստանալն զայսպիսի ծանուցագիր ի վիճակային իշխանութենէ, նահանգապետն առնէ զարժանին տնօրէնութիւն վասն յայտնելոյ ի ձեռն գաւառապետաց յիշեալ անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի բնակչաց այնոցիկ տեղեաց, որք ստորադրեալ են Հոգեւոր կառավարութեան կամ անընդմիջաբար վիճակային իշխանութեան ստորադրեալ գործակատարութեանց, որպէս զի նոքա ցնշանակեալ ժամանակակէտն ընտրեսցեն զերկու երկու երեսփոխանս, որք ի նշանակեալ ժամանակի պարտին զտանիլ ի զլիաւոր քաղաքի այնր վիճակի, յորում նոքա պատկանին և ի միասին ընդ երեսփոխանաց այնր

քաղաքի ընտրեն զմի պատգամաւոր յայնր Վիճակէ:

Ժանսթուծիւն. Թէև գործակատարութիւն Քութայիսոյ անընդմիջաբար չէ ստորագրեալ Վիճակային իշխանութեան, բայց որովհետև Լուսաւորչական Հայոց եկեղեցիք Իմերեթիոյ և Գուրիոյ կազմեն զմասն Վիճակին Վրաստանի, ուստի ի բնակչաց գործակատարութեան Քութայիսոյ նշանակին նմանապէս երկու երեսփոխանք

4) Ի կոչումն երեսփոխանաց կարեն նշանակիլ անձինք որպէս ի թուոյ տեղական ընտրողաց, նմանապէս և ի բնակչաց թեմական քաղաքի, որք ունին իրաւունս մասնակցել յընտրութիւնս: Ընտրեալ երեսփոխանք ի տեղական բնակչաց և ի գէպս անհնարաւորութեան ուղեւորելոյ ի թեմական քաղաքն, կարող են տալ այլում զիրաւունս իւրեանց ըստ հաւատարմագրաց:

5) Վասն ընտրելոյ զերեսփոխանս զլիւսաւոր քաղաքի Վիճակին, իւրաքանչիւր վիճակաւոր Առաջնորդ ըստ համաձայնութեան նահանգապետին հրամանագրէ աւագ քահանայից բոլոր եկեղեցեաց այնր քաղաքի, յորում նա բնակի, զի նոքա յառաջիկայ կիւրակէի յեկեղեցիս ծանուցմամբ հրաւիրեսցեն զանձինս, որք ունին ըստ վաղեմի ծիսի Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ զիրաւունս մասնակցել յընտրութիւն

աշխարհական պատգամաւորի, ընտրել ի միջոյ իւրեանց զերեսփոխանս վասն ընտրելոյ զպատգամաւորս, որ պարտաւոր է մասնակից լինել յընտրութիւն Պատրիարքին ամենայն Հայոց:

Ընտրութիւն այսոցիկ երեսփոխանաց լինի հետեւեալ կարգաւ.

Ա) Ժողովրդականք իւրաքանչիւր եկեղեցւոյ, որք ըստ վաղեմի ծիսի Հայոց եկեղեցւոյ ունին իրաւունս մասնակից լինելոյ յընտրութիւն պատգամաւորի, ընտրեն ի միջոյ իւրեանց զերիս երեսփոխանս:

Բ) Ընտրութիւն երեսփոխանաց պարտի լինել կամ ի նոյն իսկ եկեղեցւոյ յայնժամ, երբ ոչ կատարի ժամերգութիւն կամ ի գաւթի նորս: Նա պարտի վերջանալ յընթացս ութ աւուրց յօրէ ծանուցման:

Գ) Յետ ընտրութեան երեսփոխանաց կազմի ընտրողական թերթ, յորում պարտի նշանակել անուն և տոհմանուն ընտրեալ երեսփոխանաց և ստորագրութիւնք ընտրողաց:

Դ) Ի վախճան ընտրութեան երեսփոխանաց (կազմի ընտրողական թերթ) աւագ քահանայք ներկայացուցանեն զընտրողական թերթս վիճակաւոր Առաջնորդաց իւրեանց, որք ըստ կարգի իւրեանց հասուցանեն զայնս նահանգապետաց, իսկ ուր չգտանին այնոցիկ, գաւառապետաց:

6) Ըստ նախորնթաց համաձայնութեան նահանգապետին կամ գավառապետին նշանակի ժամանակ և տեղի ժողովելոյ երեսփոխանաց ի գլխաւոր քաղաքի վիճակին:

7) Ի նշանակեալ ժամանակի բոլոր ընտրեալ երեսփոխանք ժողովին ի նշանակեալ տեղւոջ վասն ընտրելոյ զպատգամաւոր ի թեմէ: Թողովն համարի կատարեալ, երբ երկու մասն յերկից երեսփոխանաց լինին ներկայ, համարելով ի նոյն թիւ և զայնոսիկ, որք ունին զհաւատարմադիր:

8) Երեսփոխանք առաջարկեն զկանդիդատս ի կոչումն պատգամաւորի քուէարկութեամբ, բայց ոչ այլապէս, եթէ ոչ համաձայնութեամբ քուէարկելեաց:

9) Զկնի քուէարկութեան, նա, որոյ կողմն լինի մեծագոյն մասն ձայնից, նշանակի պատգամաւոր այնք վիճակի, յորում եղև ընտրութիւն: Իսկ նա, որ ընդունի զկնի նորա զառաւելագոյն ձայն, նշանակի կանդիդատ վասն կատարելոյ զպաշտօն պատգամաւորի ի դէպս մահումն կամ հիւանդութեան նորին:

10) Ի ժողովի երեսփոխանաց ի ժամանակի ընտրութեան պատգամաւորի ներկայ գտանի տօտիճանաւոր, նշանակեալ ի կառավարութենէ վասն պահպանութեան կարգի:

11) Ընտրեալ յամենայն վիճակաց աշխարհական պատգամաւորք պարտին ի նշանակեալ ժամանակի ուղեորել ի վանս Էջմիածնի վասն մասնակից լինելոյ յընտրութիւն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն հայոց:

12) Այսոքիկ պատգամաւորք ի դէպս անհնարութեան ներկայ գտանելոյ ի վանս Էջմիածնի ի նախանշանակեալ ժամանակակետի վասն ընտրութեան Պատրիարքին, ունին ըստ օրինաց զիրաւունս զրաւորաբար յայտնել զիւր կարծիս, հասուցանելով զայն ի վանս Էջմիածնի:

Ստորագրեաց՝ Փոխարեայ Կովկասեան Գեներալ-Ֆելդցեյսիս Միխայիլ.

Վաւերացոյց՝ Կառավարիչ Գլխաւոր Կառավարութեան՝ Սեմասու, Սասա սեկրետար Բարսեղ Ա. Նիկողայ.

Գիրեկսու Ն. Բարանովսկի.

Ուղիղ Է. Ի. Տ. Ասեմազարի Սիմոնի Ս. Էջմիածնի Յ. Մուսիկեանց.



1908 թ.

Վաղարշապատ

Տպարան Ս. Էջմիածնի

4047

ՀՀ Ազգային գրադարան



NL0030728

9m

